

սրտի. յաղերս ընծայից ի մեր եկեղեցի. ի միշտ յիշատակ՝ յիշատակաւոր տանդ բարեկրի. որք եկեալ ժամանեալ ողջ և անարատ՝ զբաւեցան ի մեր ձեռն. մանաւանդ թէ ի գանձ պահեստի տանն Աստուծոյ. զորս տնտեսեսցուք ի գործ լուսարարութեան մերոյ տաճարի՝ յոր երևելի տարեկան տօնի: Եւ արդ ընկալեալ զայս նուէր առատ ի քոյին բարեպաշտութենէ, պարտաւորիմք զքեզ ի կարգ բարերարաց միաբանութեան մերոյ կրկին արձանագրել. աղօթկեր եղեալ յաճախ խնդրուածովք՝ ընուլ զքեզ և զքոյսն տեառն Աստուծոյ՝ օրհնութեամբ մեծաւ նահապետացն առաջնոց. ընդ արբանամու մեծանալ. ընդ իսպառկայ զօրանալ. ընդ յակոբայ բարգաւաճիլ. ընդ յովսեփայ սքանչանիլ. ընդ մովսէսի հրաշանալ. ընդ բեսէլիէլի հոգեկրիլ, ընդ սողոմոնի զգօնանալ. ընդ զօրաբարելի առ վեհիւ շնորհս գտեալ, ի թշնամեաց ազատեալ, ի վշտաց ճողոպրեալ. զեկեղեցին Քրիստոսի շինութեամբ խնդացուցես. յորմէ զքե և զքոյին կողակցաւ և զամենայն որդւովք, և զհամօրէն ընտանեօք՝ շնորհ, ողորմութիւն և յաւիտեանական փրկութիւն, որ է օրհնեալ ի յամենայն յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ նամակս օրհնութեան ի վենետիկ  
 ի վանս սրբոյն Ղազարու, յամի տեառն 1768 [Ստեփանոս վրդ. Մեղրոնեան ԱԲԲ.]  
 օգոստ. 15 ի փոստ ամենափրկչին

### ՄԱՍ.

Ծանր արկած մը կը կարդանք այս թուղթին մէջ՝ ծանօթ Ասսեմանի ընտանիքին համար. բայց և զմեզ կը շահագրգռէ՝ որովհետեւ Հայ գրոց և ձեռագիրներու կեանքին ալ կը պատկանի:

Վերապատուելի Տեառն Տեառն Հօր Մկրտչի և Վարդապետի  
 կարօտիչ սիրոյ ողջոյն

... Դանուցանեմ եղբայրութեան քում զանցսն աստիմանեանց, որոց պատահեցաւ դժբախտութիւն մի կարի զարմանալի, և ընդ ամենայն ազգս հոշակելի և յամենայն դարս պատմելի: Ուրեմն սոքա իսկոյն հարս մի առին հոսմայեցի նշանաւոր իւրեանց նեփօթին, և հոգացան տալ թիթօլօ Գօնթէսոյ Աստէմանի... վասն ածելոյ զսա ի. բնակութիւնն վաթիկանին, (քանզի հարսն է ... նէփօթի փափին) սկսան յօրինել զբնակութիւնսն, և զարդարել. որոյ պատճառաւ զոր ինչ ունէր մօնսինեօր աստիմանին, բարձին անտի ուր էրն և եղին՝ ի թաւանն վաթիկանին, և մանաւանդ ի յայնոսիկ սենեակս վերին կողմանն ուր ոչ գոյ բնակութիւն: Ուրեմն յանկարծակի իմն ոչ ոք գիտէ, հրդեհեցան այսոքիկ աղխամախք, և այրեցան բովանդակք մինչև չմնալոյ և ոչ ասեղ մի: Ի մէջ որոց այրեցան և հայոց գրեանքն զոր ունէր աստիմանին. և մանաւանդ այն ձեռագիր ձառընտիրն որ էր հայոց ժամուն, զոր տեսի ես զոր ոմն... տուեալ էր յանուն վաղիկանին, և գտաւ ի մէջ գրոց նորս. որպէս և իցէ ընդ նոցա էին քառասուն հազար վօլումի և բովանդակք այրեցան, թող և զայլ աղխամախսն. և վաղիկանին ոչ այլ ինչ փաստեղ և բայց եթէ որմունքն և թաւանն և վերնատունն. և զսորա մտին ասի իբր ստոյգ իմն թէ ետես ի հեռաւոր ի 20 ժամու և կիտոյ. պասն որ զբօնոյր ի մօնթօգաւալն ասելով զժամ, և ետես զմտին և առաքեաց զձիւարսս. քանզի մօնսինեօրն բնակէր ի պարտիզի իւրում ալլա Լօնկարա: Ուրպէս և իցէ ոչինչ յիշատակ մնաց աստիմանին, բայց եթէ արծաթեղէնքն: Բովանդակ Հոսմ կան զարմացեալք. և ոչ եմք հասու եթէ որպէս եհասանդ հուրն. ինքեանք ասեն կայծակի գործ...:

Գրեցաւ ի Հոսմ 1768  
 ի սեպ. 3-ին

Ունարժան ծառայ  
 Հ. Գէորգ [Պաղտատարեան]